<<ՀԱՍՏԱՏՎԱԾ Է>>

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի

գիտական խորհրդի 29.04.2019թ. թիվ 4 նիստում:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի

գիտական խորհրդի նախագահ,

ոստիկանության գեներալ-մայոր

Մ. Բաբայան

<<_____>>_____2019թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրում (այսուհետ՝ կրթահամալիր) սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման նպատակները, ընթացակարգերը, չափանիշների ամրագրման աղբյուրները և գնահատողի գործողությունների նկարագիրը:

2. ՀՀ ոստիկանության կրթահամալիրում սովորողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման հիմնական նպատակներն են.

1) ապահովել գնահատման սահմանված չափանիշների պահպանումը,

2) ներմուծել հետադարձ կապի մեխանիզմներ՝ գնահատման արդյունքները դասախոսների և սովորողների կողմից որպես դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման միջոց օգտագործելու համար,

3) ապահովել սովորեցնող գանահատում՝ պարտադիր համարելով դասախոսի կողմից առավելագույն հնարավոր գնահատականից ցածր գնահատական նշանակելու դեպքում միավորի իջեցումը հիմնավորելու գործելաոճը,

4) ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, մասնագիտական կարողությունների և հմտությունների գնահատում՝ ըստ մասնագիտության կրթական ծրագրի վերջնարդյունքներին ներկայացվող պահանջների,

5) ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցային տարրեր, խթանել սովորողի ակտիվությունը,

6) ապահովել գնահատման արժանահավատությունն ու օբյեկտիվությունը՝ գիտելիքների և կարողությունների գնահատման ընթացքում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչներ և դրանց կարևորության աստիճանը,

7) ապահովել ստուգման արդյունքների ինտեգրումը՝ ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորումը:

3. Կրթահամալիրում սովորողների գիտելիքների գնահատման համակարգը միտված է նպաստելու սովորողի ուսումնառության բարելավմանը՝ հիմք ընդունելով հետևյալ ընթացակարգերի առկայությունը.

1) գնահատման գործընթացի շարունակականության ապահովումը՝ նպաստում է սովորողների թույլ և ուժեղ ունակություններ, կարողություններ և ներուժ ունեցող սովորողների բացահայտմանը,

2) ընթացիկ, միջանկյալ, ամփոփիչ գնահատում՝ նպաստում է սովորողի առաջխաղացմանը և նրա սովորողի մասնագիտական ձեռքբերումների մասին պատկերացում կազմելուն,

3) ձևավորող կամ կառուցողական գանահատում՝ թվային գնահատման հետ զուգահեռ՝ դասախոսի բանավոր և/կամ գրավոր հայտնած հատուկ կարծիքները նպաստում են սովորողի գիտելիքների հարստացմանը, ունակությունների բացահայտմանը և մասնագիտության հանդեպ վերաբերմունքի ձևավորմանը:

4. Սովորողների գիտելիքներ, կարողությունների և հմտությունների ստուգման և գնահատման համակարգերը սահմանվում են համապատասխան կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերով:

5. Սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման չափանիշները սահմանվում են համապատասխան կրթական ծրագրերով առարկայական նկարագրերով, ինչպես նաև՝ կուրսային, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման և պաշտպանության կարգերով:

6. Սովորողի գիտելիքները գնահատելիս դասախոսը առաջնորդվում է գնահատողի գործողությունների նկարագրով (Հավելված):

7. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Կրթահամալիրի գիտական խորհրդի որոշմամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ

ԳՆԱՀԱՏՈՂԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԳՆԱՀԱՏՈՂԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՈՅՆԸ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ
Սովորողի գնահատման պլանավորում	1. Համոզվել, որ ապահովված են սովորողների գնահատման համար անհրաժեշտ պայմանները: 2. Սովորողներին պարզաբանել գնահատմանը վերաբերող բոլոր հարցերը: 3. Ստուգել գնահատման գործընթացի՝ սովորողների ընկալումը:
Գնահատման իրականացում	1. Ապահովել սովորողի համար բոլոր անհրաժեշտ ռեսուրսների մատչելիությունը: 2. Կիրառել գնահատման սահմանված չափանիշները: 3. Համոզվել, որ գնահատման հիմքում դրված փաստերը վավերական են, ճշգրիտ և բավարար:
Սովորողի հետ հետադարձ կապի ապահովում և աջակցության տրամադրում	1. Հետևել գնահատման ընթացքում սովորողի կատարողականին: 2. Սովորողին հստակ պատճառաբանել գնահատականը: 3. Սովորողի գիտելիքը անբավարար գնահատելու դեպքում տրամադրել խորհրդատվություն թերությունների շտկման վերաբերյալ:
Գնահատման արդյունքների արձանագրում	1. Համապատասխան կանոնակարգերով և ընթացակարգերով սահմանված ժամկետում կատարել բոլոր պահանջվող գրառումները: 2. Համոզվել, որ գրառումները կատարված են պատշաճ կերպով: 3. Գնահատման արդյունքների մասին տեղեկացնել ամբոհնի պետին: